



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի (վարչական) դատարանի վճիռ
Վարչական գործ թիվ 0202/05/2010թ.
Նախագահությամբ դատավոր՝ Ա. Ամիրջանյան

Վարչական գործ թիվ 0202/05/2010

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝
դատավորներ

Գ.Գրիգորյանի
Զ. Օհանյանի
Կ.Ղարայանի

2010թ հուլիսի 30-ին

դռնբաց դատական նիստում, քննելով հայցվոր Մելսիչ Պետրոսյանի ներկայացուցիչ Ռաֆիկ Ավանեսյանի վճռաբեկ բողոքը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի (վարչական) դատարանի 2010թ. ապրիլի 13-ի վճռի դեմ՝ ըստ հայցի Ազնվիկ Աբրահամի Պետրոսյանի ընդդեմ ԼՂՀ ԱԳԿ ՊԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման՝ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

Ազնվիկ Պետրոսյանի ներկայացուցիչ՝ Ա.Վ.Թարխանյանը դիմելով դատարան, հայտնել է, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ վարչական դատարան) վճռով հաստատված է համարվել այն հանգամանքը, որ Մաճկալաշեն գյուղի նախկին համայնքապետը անօրեն տրամադրել է Սմբատ Պետրոսյանին՝ սեփականության իրավունքով համայնքի տարածքում բնակելի տուն և 0.04 հա հողամաս ունենալու մասին տեղեկանք: Տեղեկանքը հիմք է հանդիսացել գրանցելու Սմբատ Պետրոսյանի սեփականության իրավունքը:

Խնդրել է անվավեր ճանաչել նշված տան նկատմամբ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից Սմբատ Պետրոսյանի անվամբ իրականացված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանի որոշմամբ՝ որպես պատասխանողներ, գործին ներգրավվել են Սմբատ Պետրոսյանի ժառանգները՝ ի դեմս Մելսիչ Պետրոսյանի:

Հայցվորի տղան՝ Խաչատուր Պետրոսյանը գործով ճանաչվել է համահայցվոր:

Նախկինում կայացված վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվել է, որ Ազնվիկ Պետրոսյանի դատական պաշտպանությունը կարող է իրականացվել միայն ժառանգությունը դատական կարգով ընդունած համարելուց հետո:

Ազնվիկ և Խաչատուր Պետրոսյանները, 2010թ. մարտի 16-ին ներկայացրել են հայցադիմում՝ վիճարկվող տան նկատմամբ ժառանգության ընդունման փաստը հաստատելու պահանջով:

2010թ. մարտի 16-ին, Մելսիչ Պետրոսյանը ևս ներկայացրել է վիճարկվող տան և տնամերձ հողամասի նկատմամբ ժառանգությունը փաստացի ընդունած համարելու հիմքերով սեփականության իրավունքը ճանաչելու հայցապահանջ:

Դատարանի որոշմամբ, երեք հայցադիմումները միացվել են մեկ վարույթում:

Վարչական դատարանի 2010թ. ապրիլի 13-ի վճռով Ազնվիկ և Խաչատուր Պետրոսյանների հայցը բավարարվել է ու նրանց կողմից ժառանգությունն ընդունած համարվել Արամ Պետրոսյանի մահից հետո թողած ժառանգական գույքի, այդ թվում նաև՝ Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղում գտնվող 1912թ. կառուցված տան նկատմամբ: Իսկ ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից իրականացված Սմբատ Պետրոսյանի անվամբ թ. 5-1 գրանցամատյանի, 04.05.2004թ., թ. 002554 համարի գրանցումը ճանաչվել է անվավեր:

Մելսիչ Պետրոսյանի հայցը՝ ժառանգությունը փաստացի ընդունելու հիմքով տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, մերժվել է:

Նշված վճռի դեմ պատասխանողի ներկայացուցիչ Ավանեսյանը բերել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում և հիմնավորումներով.

1. Վարչական դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը:

Նշված պնդումները բողոք բերած անձը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Ըստ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին կետի, հանրահայտ փաստերն ապացուցման կարիք չունեն: Համաձայն ՀՍՍՀ (կամ Ադրբեջանական ՍՍՀ) նախկին քաղաքացիական օրենսգրքի 108-րդ հոդվածի, քաղաքացիներին և նրանց հետ ապրող ամուսիններին իրավունք էր վերապահում ունենալ ընդհամենը մեկ բնակելի տուն: Եվ երբ քաղաքացին այլ հիմքերով ձեռք է բերում այլ բնակելի տուն, ապա պարտադիր կարգով այն մեկ տարվա ընթացքում պետք է օտարվի: Հակառակ դեպքում, այն անհատույց դառնում է պետության սեփականություն:

Վարչական դատարանի դատական նիստին մասնակցել է այլ կողմ՝ Մաճկալաշենի գյուղապետարանը: Գյուղապետի կողմից ներկայացված գրավոր վկայություններն այն մասին, որ վիճելի տունը լրիվ վերակառուցվել է Ս.Պետրոսյանի կողմից, դատարանը չի հետազոտել ու հաշվի չի առել վճիռ կայացնելիս:

2. Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀԽՍՀ 1964թ. 117-135-րդ հոդվածների՝ պահանջները այն մասին, որ կոլտնտեսային ծխի ունեցվածքը տիրապետվում և օգտագործվում է կոլտնտեսային ծխի բոլոր անդամների համաձայնությամբ, առանց հաշվի առնելու, որ ձևավորված սովորույթի ուժով կոլտնտեսային ծխում տան գլխավորը տարեց տղամարդն էր, որը կարևոր հարցերով ընտանիքի անդամների անունից տալիս էր իր համաձայնությունը:

Փաստորեն, 1975թ. Արամ և Սմբատ Պետրոսյանների փոխապայմանավորվածությամբ առանձնատունը գրանցվել է Սմբատ Պետրոսյանի անվամբ: Վերջինս Արամ Պետրոսյանին է վճարել 850 ռուբլի:

Հայցվոր Պետրոսյանները չեն ներկայացրել դատարանին իրենց պահանջները հաստատող որևէ ապացույց, այլ հիմնվել են նրա վրա, որ հրդեհի պատճառով այրվել է տնտեսական գիրքը, իսկ Ս.Պետրոսյանը մահացել էր:

Բողոք բերած անձը խնդրել է բեկանել վարչական դատարանի 2010թ. ապրիլի 13-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության կամ մերժել Ազնվիկ և Խաչատուր Պետրոսյանների հայցերն՝ որպես անհիմն և ժառանգությունը փաստացի տիրապետման հիմքերով ճանաչել Ս.Ս.Պետրոսյանի սեփականության իրավունքը վիճելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման դատական ակտ և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վճռաբեկ բողոքի համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 1949թ. հայցվոր Ազնվիկ Պետրոսյանը ամուսնացել է Արամ Պետրոսյանի հետ և բնակություն հաստատել ամուսնու ծնողներին պատկանող տանը:

2. Սմբատ Պետրոսյանը 1938 թվականից մշտապես բնակվել է Բաքու քաղաքում: 1945-46թթ. նա ծնողների հուղարկավորությանը չի մասնակցել:

3. Վարչական դատարանի 2008թ. մայիսի 8-ի որոշմամբ անվավեր է ճանաչվել Սմբատ Պետրոսյանի և Հակոբ Մելքումյանի միջև 2004թ. հուլիսի, 20-ին կնքված անշարժ գույքի պայմանագիրը: Իսկ Սմբատ Պետրոսյանի անվամբ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ գործի վարույթը կարճվել է:

4. Ըստ Սոս գյուղի տնտեսական գրքի, 1975թ. դրությամբ՝ 1912թ. և 1958թ. կառուցված երկու տները գրանցված են եղել հայցվորի ամուսնու՝ Արամ Պետրոսյանի անվամբ:

5. Ժառանգատու Արամ Պետրոսյանի մահվանից հետո, հայցվորը և տղան՝ մնացել են բնակվելու 1966թ. կառուցած բնակելի տանը և փաստացի ընդունել Ա.Պետրոսյանի ժառանգական գույքը՝ վիճելի տան, հողամասերի, նորակառույց տան գտնվող այլ գույքի ժառանգատուի բաժնի նկատմամբ:

Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանություններով.

Վարչական դատարանի դատական կոլեգիայի 2009թ. մայիսի 8-ի վճռով, Ազնվիկ Պետրոսյանի հայցը բավարարվել է մասնակիորեն, անվավեր է ճանաչվել պատասխանող Սմբատ Պետրոսյանի և Հակոբ Մելքումյանի միջև 20.07.2004թ. կնքված առքուվաճառքի պայմանագիրը: Իսկ Սմբատ Պետրոսյանի անվամբ սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

Նույն վճռով դատարանը հաստատված է համարել Սմբատ Պետրոսյանին՝ սեփականության իրավունքով համայնքի տարածքում բնակելի տուն և 0.04 հա հողամաս ունենալու մասին Մաճկալաշենի համայնքի ղեկավար Խաչատրյանի կողմից անհիմն տեղեկանք տալու հանգամանքը: Հետագայում, Սմբատ Պետրոսյանը, այդ տեղեկանքի հիման վրա գրանցել է իր իրավունքները ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի Մարտունու տարածքային ստորաբաժանումում և ստացել սեփականության իրավունքի վկայական:

Վարչական դատարանի 2009թ. մայիսի 8-ի վճիռը օրենքով սահմանված ժամկետում չի բողոքարկվել ու մտել է օրինական ուժի մեջ:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի, քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից:

Գործի փաստերի համաձայն, դատարանի օրինական ուժի մեջ մտած 2010թ. մայիսի 8-ի վճռով վիճարկվող սեփականության իրավունքը ճանաչվել է օրինական հիմքերից զուրկ:

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի, նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերը մինևույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:

Վարչական դատարանը վերը նշված հիմքերով ճիշտ հետևության է հանգել ու հիմնավոր համարել Ազնվիկ և Խաչատուր Պետրոսյանների՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջը: Ուստի, Գերագույն դատարանը անհիմն է համարում բողոք բերած անձի այն պատճառաբանությունները, որ վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ու կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի այն փաստարկին, որ վարչական դատարանի կողմից խախտվել է նաև ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ապա Գերագույն դատարանը արձանագրում է, որ դատարանը վճիռ կայացնելիս չի հիմնվել ու անդրադարձել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասին, ուստի վճռաբեկ բողոքի այդ հիմքին Գերագույն դատարանը չի անդրադարձնում:

Վարչական դատարանը 2009թ. մայիսի 8-ի օրինական ուժի մեջ վճռով, 1966 թվականից հետո, Արամ Սմբատ Պետրոսյանների միջև տեղի ունեցած առուվաճառքի պայմանագրին տվել է իրավական գնահատական, ինչի մասին նշված է նաև վարչական դատարանի բողոքարկվող վճռում, ուստի Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի այդ հիմքին չի անդրադարձնում:

Ըստ գործի տվյալների, պատասխանող Սմբատ Պետրոսյանը 1938 թվականից մշտական բնակության է մեկնել Բաքու քաղաք, անգամ չի ներկայացել ծնողների հուղարկավորություններին (1945-46թթ.): Հայցվորը ամուսնու՝ Արամ Պետրոսյանի հետ շարունակել են բնակվել վիճելի տանը:

1966թ. հայցվորի ընտանիքը տեղափոխվել է նոր կառուցած տունը, իսկ ծնողների մահանալուց հետո, Արամ Պետրոսյանը փաստացի տիրապետմամբ ընդունել է ժառանգությունը՝ վիճելի բնակարանի նկատմամբ, իրականացնելով նաև վիճելի տան նկատմամբ տիրապետումը: Գործի փաստական հանգամանքներով, 1975թ. դրությամբ, հին և նոր տները գրանցված էին Արամ Պետրոսյանի անվամբ:

Հաստատված է նաև, որ ժառանգատու Արամ Պետրոսյանի մահից հետո (30.06.2004թ.), հայցվորները մնացել են բնակվելու 1966թ. կառուցված բնակելի տանը՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված հիմքով (փաստացի տիրապետմամբ) ընդունելով ժառանգությունը՝ նշված տան, հողամասի, նորակառույց տանը գտնվող այլ գույքի նկատմամբ ժառանգատուի բաժնի նկատմամբ:

Վարչական դատարանը ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի 3-րդ կետով, հաշվի առնելով հայցվորների՝ Արամ Պետրոսյանի այլ ժառանգական գույքը ընդունելու հանգամանքը, իրավացիորեն ընդունած է համարել նաև նրանց ժառանգությունը վիճելի տան նկատմամբ:

Գործում առկա, վերը նշված փաստական հանգամանքների առկայության պայմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ վարչական դատարանը ճիշտ հետևության է հանգել ու հայցվորներ՝ Ազնվիկ և Խաչատուր Պետրոսյանների կողմից ընդունած համարել Արամ Պետրոսյանի մահից հետո թողած ժառանգական գույքը, այդ

թվում՝ Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղում գտնվող 1912թ. կառուցված տան նկատմամբ, անվավեր ճանաչելով կադաստրի Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից կատարված Սմբատ Պետրոսյանի անվամբ թ. 5-1 գրանցամատյանի 05.04.2004թ., թ. 002554 համարի գրանցումը:

Գերագույն դատարանը որոշման մեջ նշված պատճառաբանություններով, հիմնավոր չի համարում Մելսիչ Պետրոսյանի ներկայացուցիչ Ավանեսյանի վճռաբեկ բողոքի հիմքերը և պահանջները:

Վերը շարադրվածներից ելնելով և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Մելսիչ Պետրոսյանի ներկայացուցիչ Ռաֆիկ Ավանեսյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի (վարչական) դատարանի 2010թ. ապրիլի 13-ի վճիռը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման :

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Զ.ՕՀԱՆՅԱՆ

Կ.ՂԱՐԱՅԱՆ